

Սիջին դարու ատենները իւրաքանչիւր քաղաք իրեն մեծ պարծանք կը սեպէր մեծ ու բարձր զանգակատուններ ունենալը : Հիմա բոլոր զանգակատուններուն մէջ ամենէն բարձրը Սթրասպուրկի մայր եկեղեցւոյն զանգակատունն է , որ դրսուանց ալ վերէն 'ի վար զարդարուն է :

Խիստ անուանի է Ս Եննայի սրբոյն Ստեփաննոսի զանգակատունը իրեն ձևին ու զարդերուն աղուորութեանը համար . և որովհետև հոս պատկերը կը դնենք՝ անոր համար քիչ մը աւելի ընդարձակ խօսինք ասոր վրայ :

Եւ եկեղեցին Ս Եննայի հրապարակներէն մէկուն մէջ շինած է , չորս դին ալ մեծամեծ շէնքերով զարդարուած . ժամը գոթացի ճարտարապետութեամբ է , ճակատը մարմարիոնէ արձաններով զարդարած , որ ժամանակ անցնելով սեցած են : Եւ մոռնալ արևելեան կողմը շինած է զանգակատունը՝ Սթրասպուրկի զանգակատան ձևովը , թէպէտ և անկէ շատ աւելի ցած է . և բարձրութիւնն է 434 ոտք գերմանական : Եւ զանգակատունը զգալի կերպով դէպ 'ի հիւսիսային կողմը ծռած է , բայց ինչ պատճառէ ծռիլը չիմացուիր : Եւ աշտարակին մէջ մեծ զանգակ մը , կայ որուն միայն լեզուն 300 լիպրէ կը կշռէ : Եւ զանգակը (Յովսէփ կայսրը թափել տուեր է ան թնդանօթներէն որ () սմանցիք Ս Եննա քաղաքը պաշարելէն ետքը հօն թողեր փախեր էին Պարա Սուսդաֆա փաշային հետ 1683ին : Եւ մոռնալ ճակատը երկու ուրիշ պզտի աշտարակներ կան : Եկեղեցւոյն հարաւային կողմը երկրորդական դուռ մը կայ , որուն քովը 1451ին 'ի վեր քարէ ամպիրն մը կայ , և սուրբ (Յովհան Կապիստրանոս անոր վրայ ելած ժողովրդեան քարոզ կուտայ եղեր , որ ժամուն մէջը չարդմելով հրապարակը կը կենային :

Եկեղեցւոյն ներսի կողմը անանկ երեւելի բան մը չկայ , և բնական սեռութիւնն ու մթութիւնը գոյն-

զգոյն պատուհաններուն ու ապակիներուն պատճառաւ ահաւոր տեսք մը ունի : Թէպէտ և մէջը շատ գերեզմաններ կան , բայց երեւելի են մէյմը փեղերիկոս Դ . կայսեր գերեզմանը , մէյմըն ալ Եւգենիոս Սաւոյացի զօրավարինը :

Օ անգակատուններու վրայ խօսածնիս ամբողջացնելու համար աւելայ ալ յիշատակի արժանի բան է՝ որ քանի մը անձինք մեքենական հրնարքներով զանգակատուններ տեղէտեղ տարին , ինչպէս Սթրաստոտէլ Սպերթի անունով իտալացի մը որ 35 քայլ տեղ տարաւ զանգակատուն մը՝ մէջի զանգակներովը 16 երորդ դարուն մէջ : Սէյմ ալ 1776ին Սերրա անունով իտալացի մը երկու մեթրէն աւելի տեղ փոխադրեց զանգակատուն մը՝ որ 21 մեթրէն աւելի բարձրութիւն ունէր , և ան միջոցին Սերրային տղան ալ մէջը կեցած՝ զանգակները կը զարնէր : Եւ Սերրան կարգացող մարդ չէ եղեր , և միայն իր բնական հանճարով երեւելի մեքենագէտ եղեր է :

ԱԶԳԱՅԻՆ ՅԱՌԱՋԱՂԱՅԻՄՈՒԹԻՒՆ

Ս ասն Գ ' .

ԵՍՊԻՍ ուրեմն երեք են , որք ցարդ խոչընդոտն եղեն գեղեցիկ զարգացման ազգիս . այսինքն են ապշութիւն մտաց , աղքատութիւն և օձտումն եղբարց յիրերաց : Եւ պաքէն զուր ջան և անարդիւն վաստակ է դարձեալ կեղակարծ մտօք ձեռն միտել 'ի փորձ զարգացման ազգիս՝ չև զառաջս կալեալ և 'ի սպառնալու բարձեալ 'ի միջոյ գերեսին զայսոսիկ զխափանարարս ուսման և արուեստից և քաղաքականութեան :

Սակայն եթէ ոք ընդդէմ բանս եղեալ ասասցէ , թէ և արդ յազգի մերում տեսանի ոչ սակաւ յառաջա-

դիմուծիւն, և թէ առանց իսկ բառ-
նալոյ՝ ի միջոյ զայդոսիկ արգելս մարթ-
է զարգանալ ուսմանց՝ կանգնելով
դպրոցս և մարզոցս, և ես հաւա-
նեալ եմ թէ մարթ է ակն ունել
այդմ ախնափ՝ որչափ ցայսօր տեսաւ.
այլ աստանօր մեր բանք են թէ զիարդ-
հնար իցէ աշխարհօրէն վառել զազ-
գըն, և զամենեւին միանգամայն ի
լոյս գիտութե խաղացուցանել. ահա
այսմ անհնար է հասանել ըստ մե-
րումս բնիկ դանդաղ ընթացից, և
այն՝ ի ձեռն սակաւածիւ դպրոցաց և
վարժարանաց ոմանց: Օ ի՛ զարգա-
ցումն բովանդակ ազգիս միանգամայն
կարեւորք են յամենայն քաղաքս և
՛ի գիւղս ունել դպրոցս ընթերցա-
նութեան և նախկին ուսմանց օգտա-
կարաց, ՛ի մեծամեծ քաղաքս՝ վար-
ժոցս բնական և բանասիրական գի-
տութեանց. մարզոցս գեղեցիկ ա-
րուեստից, արուեստատունս, տպա-
գրատունս, գրատունս, թանգարանս
բնական պատմութեան, և արուես-
տագործ ձեռակերտաց, և որ ՛ի սո-
ցին սակի են:

Եւ որ ո՞ ձեռնհաս իցէ ընուլ զայս-
պիսի կարօտութիւն մեծ. և միթէ
իցէ՞ հնար հասանել այսմ ըստ ցայսր
ժամու ընթացիցն. միթէ բաւականք
իցեն բարերարք ոմանք և եթ լուսա-
ւորել զազգ մի ողջոյն կառուցմամբ
քանի մի դպրոցաց. ոչ միոյ ոչ եր-
կուց և ոչ տասանց գործ է այդ: Ահա
կառակիմ ես այնմ՝ թէ մարթասցեն
ծագել աղօտ ինչ լոյս. այլ չկարաս-
ցեն ՛ի գլուխ հանել զառաջագորու-
թիւնս մտաց իւրեանց, և փոփոխու-
թիւնս մեծամեծս առնել յազգին,
թէպէտև անբաւ գանձս ծախեսցեն
յայն պէտս. քանզի ՛ի բուռն հար-
կանել անդ զմեծամեծ գործոց, հըս-
կայք վիթխարիք թուին և փոքունքն
անգամ դժուարութիւնք ընդ առաջ
պատահեալք: Եւ թէպէտ որչափ և
հեշտին իցէ յաղթահարել զմի կամ
գերկուս ՛ի նոցանէ, այլ բազում այն
է՝ զի յերրորդէն ընկիճեալ բարե-

րարն, ձեռնթափ լինի ՛ի սկսեալն գոր-
ծոյ, որով և առաջագորութիւն մտա-
ցրն և գեղեցիկն ձեռնարկ մնայ ան-
խնամ և անկատար:

Ի մեծաց դժուարութեանց զորոց
ասացաք, առաջինն է անձկութիւն
դրամոց կամ յստակագոյն ևս ասել՝
անանկութիւն. քանզի բարերար որ
այր մինչ դեռ զամենայն ունի լիութե-
ամբ, կամեցեալ ծաւալել և յազ-
գըն ողջոյն զբարերարութիւնս իւր,
բաշխէ առատութեամբ զձօխութիւն
համազգի եղբարց, կառուցանելով
վասննոցա դպրոցս, աղքատանոցս, ան-
կեւանոցս, և այլն. այլ զի ՛ի մերում
աշխարհի առաւել քան զլուսին փո-
փոխին կերպարանք իրաց և բաղդ իւ-
րաքանչիւր, ՛ի փոփոխիլ վիճակի և
բարերարին, անբաւական գորով այլ
ևս յոտին ունել զչինուածսն զայնու-
սիկ, մի մի և կամ ամենայնս միան-
գամայն խափանին: Եւ ոչ եթէ ա-
ռասպելք են այս, այլ ճմարտութի
անաղարտելի, որոյ ընդ փորձ անցեալ
է մեր, և զիրացն տարացոյց բազում
անգամ տեսեալ և ՛ի մերում իսկ
ժամանակի:

Եւ զիցուք թէ ըստ բաղդին յա-
ջողութեան մարթ իցէ կանգուն կալ-
նոցին ՛ի սպառ. այլ ասա ինձ, քա-
նիք ոմանք իցեն յազգի մերում, որ
զայսպիսի մեծամեծ բարերարութեց
բուռն հարեալ տեւել կարիցեն. եթէ
իցեն շատ՝ չորք կամ հինգ ոմանք, բայց
տես ինձ զի ազգ մեր ոչ եթէ հնգից
կամ վեցից, այլ հազարաց դպրոցաց,
վարժոցաց և արուեստանոցաց ունի
պէտս. իսկ հինգ կամ վեց կրթա-
րանք վասն ազգի միոյ այնպէս են, որ-
պէս կաթիլ մի անձրեւոյ մեծի ան-
դաստանի, կամ որպէս բոց միոյ ձրա-
գի՝ ողջոյն քաղաքի: Եւ ող զի անյա-
ջողութի գործոյն, անպտուղ և ընդ-
վայր ծախք, տարապայման հոգք և
վաստակք, և դոյզն դժկամակութիւնք
ընդ առաջ ելեալք շատ են վասն բա-
րերարին թողուլ լքանել և ձեռնու-
նայն ՛ի բարերարութեանցն լինել:

Լայս ամենայն քաջիկ յայտ առնեն, թէ 'ի զարգացումն ազգին անհնար է վարիլ սովին օրինօք՝ որով ցարդն վարեցաք. և անօգուտ ջան և զուր դեգերանք են՝ եթէ դարձեալ սնոտի յուսով պատրեսցուք զանձինս և նուրբ շատասցուք:

Եւ արդ պարտ է յայլ հնարս մըտանել 'ի զարգացումն ազգին. և յայնպիսի հնարս, զի նախ աղքատութիւն և եղբարցն բաժանումն չկարացեն ոտնխէթ լինել ընթացից մերոյ ազգիս, և երկրորդ խրախուսեսցին նուաւ մերքն 'ի ջանս ուսման և արուեստից: Եւ զի՞նչ հնարքն իցեն:

Ի քաղաքական տեսչութեան Եւրոպայ տեսանեմք օրէնս իմն այսպիսի, զի շահապ քաղաքի իրիք հարկս հարկանէ 'ի մեծէ և 'ի փոքուէ ըստ իւրաքանչիւր պայմանի և բաղդի, և զնոյն գումար ծախէ դարձեալ 'ի վայելիս ժողովրդեան՝ կառուցանելով վոնց վարժոցս, արուեստատունս, հրապարակս, և այլն. համառօտ ասել՝ զոր մի անգամ հանէ 'ի ժողովրդեանէ անտի, զնոյն դարձեալ շնորհէ նուցա. զրկէ զնոսին սակաւութ, այլ կառուցմամբ հասարակաց ինչ շինուածոյ, ընդ իրեարս զօդէ զնոսա. վասն այսորիկ իբրեւ եղբայր համարեալ են քաղաքացի առ քաղաքացի, շինական առ շինական, և հասարակաց շինուածոյն պաշտպան կան իբրեւ իւրեանց ինչ ստացուածոց. քանզի թէպէտ և դոյզն ինչ դրամս ծախեալ իցեն յայն, և գուցէ յակամայս իսկ, այլ ամենեքին հաւասար տեարք են նոցին:

Որ նոքա յակամայ և 'ի հարկէ մատակարարելով շինութիւնս մեծաւ մեծս գործեն յաշխարհի, զի՞նչ եթէ մեք յորդորեալ միայն 'ի հայրենասիրութենէ յօգուտ մեր արկցուք զնոյն հնարս, և 'ի շինութիւն և 'ի բարգաւաճանս աշխարհիս մերոյ վարեսցուք:

Եւրդ իմ այս են կարծիք, եթէ ազգս մեր ընկերութեամբ միայն կարէ յառաջել 'ի հրահանգս ուսման արուեստից և քաղաքականութեան: Վրան

զի ընկերութեանն զօրութիւն համաչափ է ուժոյ թագաւորի. ընկերութեք միայն մարթ է վերստին կանգնիլ փշրելոյ և վատնելոյ ժողովրդեան, ընկերութեք միայն մոռացումն լինի տառապանաց ժողովրդեան, ընկերութիւնն միայն զօրէ թուամբ հրգօր արկանել ընդդէմ յարձակման թշուառութեանց. և անուսմնութի թշնամի ազգի մարդկան և բարեբաստութեան ժողովրդոց բազմութեամբ մարդկան և ընկերական զօդիւ միայն մարթի նկուն լինել. ուսմունք և արուեստք ընկերութեամբ միայն բարգաւաճին յաշխարհի մերում, և ընկերութեամբ և եթէ հնացեալ և աւերեալ աշխարհի մերում հնար գոյ շինութե. քանզի ընկերութեանդ առնուն միաբանութի լսի. և միաբանականն որչափ և տկար իցէ հզօր է քան զմին: Նկերական դաշնակցութեք բառնի ամենայն կրճիմն դժուարութեանց զորոց բազում անգամ ասացաք: Վրանդի նախ՝ ուշն պատակի ընկերութեանն գոլով մի, ոչ 'ի մեռանել միոյն և ոչ 'ի յուսահատ լքանել միւսոյն խափանին խորհուրդք առաջարկութեան. և երկրորդ այսու զարմանալի միաբանութեամբն, և ամենայն ձեռն թէպէտ և տկար, կարէ օգնական լինել 'ի յառաջադիմութի ազգին:

() Երինակի աղագաւ դիցուք թէ 'ի կառուցումն արուեստական ինչ մարզոցի պիտին դահեկանք հարկւր հազար. եթէ ստանձնեսցէ որ զայս բեռն, տուժել տուժէ փնասու անձին, և բազում այն է զի ընկճել ևս հասանէ ընդ ծանրութեամբ ծախուցն. իսկ եթէ անձինք տասն հանգանակեսցեն մէն մի տասն հազար դահեկանս, շինուածոյն կառուցումն և ևս յաջողէ. քանզի չգտցի որ արդեօք որ զհարկւր հազարսն կամիցի կամ կարասցէ ծախել առանց մեծի տուգանաց, այլ զտասն հազարսն բազումք արդեօք. արդ եթէ քսան իցեն ընկերքն հինգ հազարաւ վճարի գործն, և դարձեալ եթէ

հարիւրիւ չափ իցեն ընկերքն, հազարաւ միայն մարթ է ունել զայն մարգատուն։ Բստ այսմ օրինակի են և ամենայն ձեռնարկք ծանր համարեալք յաչս ժողովրդեան, որոց ելք դիւրին են և անաշխատ։

Բայտու տեսանի աղնեքն, զի 'ի զարգացումն ազգին ոչ միայն կարի փարթամքն, այլ և չափաւորք անգամ կարեն ձեռն տալ։ Ինքեցիկ է տեսանել տնանկս չբաւորս որք 'ի միմիաբանեալք, և միմի կամ երկուս դանկս մէն մի եղեալ, կեանս հայթայթէին այրւոյ ումեմն աղքատագունի քան զինքեանս, որ հիւանդագին կենօք չկարէր ինամ ունել և զկերակրիկն մանկանց իւրոց շնորհել։ Եթէ մուրողք ոմանք չբաւորք զայս առնեն, մի թէ արք չափաւորք ընչիւք չկարիցեն միաբանիլ և ձեռն տալ մարմնոյ ազգին 'ի նեղութեանն, յորում ձեռնտուութեան որդւոց իւրոց կարօտի։

() արմանամբ մեք ընդ հսկայաքայլ զարգացումն անգղիացւոց և գաղղիացւոց 'ի քաղաքականութեան և յարուեստս . քանզի առ նոսա հրաշակերտք և վիթխարի շինուածք ընդ որս յապուշ կրթին միտք այժմու մարդկանն, ընկերութեամբ քաղաքայնոց վճարին . որպէս՝ ստորերկրեայ անցք թայմզ գետոյ, որ մի 'ի հրաշալեաց այժմու աշխարհիս համարի, ընկերութեամբ և եթ ել 'ի գլուխ . յաճախութիւնք երկաթի ճանապարհաց, շոգենաւաց, նաւարկութեանց, շահավաճառ փոփոխմանց, և ամ ազգք բնական և արուեստական գիտութեց, և տպագրութեանց, ընկերութեամբ յաճումն քան և ընկերութիւն և եթ յաջող ելս գտանեն . համայն ասել, միահաւան ընկերութիւնք կերպարանափոխ արարին զԵւրոպայ ողջոյն։ Եւ 'ի պատճառս ընկերութեանցն յակաճիւս կացեալ ազգք ապաժամանակաց զարմասցին ընդ մեծագործութիւնս այժմու մարդկանն։

Երանի ազգի մերում որ 'ի լուսաւորեալ ժամանակի եւրոպացւոց բա-

նին աչք մտաց նորա 'ի տեսանել ըզլոյս իմաստութեան և գիտութեան . երանի ասեմ նմին, եթէ գիտացէ յօգուտ իւր արկանել զայս ժամանակ բարեպատեհ։ Բանգի չիք այլ հնար բժշկութեան մերոյս կործանման, եթէ ոչ միահաւան ընկերութիւն ազգայնոց . զի սովիմք եղբայրացեալք ընդ միմեանս աննախանձ աչօք քաղաք ընդ քաղաքի, մարթեն զառաջս ունել աղքատութեն աղէտից։ Թշնամի ոխերիմ և աւերիչ տանն հայոց եկաց ցարդ տգիտութիւն . և անողորբելին այն բռնակալ 'ի բիւր տառապանս բիւրիցս մահացոյց զմեզ . Թշնամի զայսօրինակ բունեալ և արմատացեալ յաշխարհի մերում, ոչ վանի եթէ ոչ միաբանականն ընկերութեամբ։

() 'ի ինչ է որ յետս կասեցուցէ արդեօք զմերսն 'ի բուռն հարկանելոյ զայսպիսի կարեւոր դարմանոց . այն ինքն է զի յամենայն ազինս առ հասարակ տեսանեմք օրէնս իմն անաղաւտելիս . զի զայն ամենայն որ չիցէ անցեալ 'ի սովորոյթ, ոչ դիւրաւ յօգուտ իւր արկանէ ժողովուրդն . և զի անխախտելի են օրէնք ժողովրդեան, պարտ է անբասիր առնել յայսմ և զմեր ժողովուրդ՝ եթէ տակաւին դանդաղեցցի ձեռն զկարեւոր գործովքն արկանել . գիտելով չափ զի պատճառս որին ոչ եթէ չկամութիւնն է, այլ անգիտութիւն և թմբութիւն և երկչոտութիւն՝ զորս ընդ առաջին արգելն դասեցաք։ Եւրդ առ 'ի բառնալ զայս խոչ ազգասէրքն միայն ձեռն հաս են . և որպէս . տալով յանձանց օրինակ, և միաբանականն սիրով զօդեալք ընդ իրեարս, հաստատելով նորանոր ընկերութիւնս ուսումնականս և արուեստականս։ Եւ ուրախ եմք զարդիւնական տարացոյց այսպիսւոյ միաբանասէր ընկերութեան տեսանել 'ի Սիւնեացն որ 'ի () միւռնիա, և զակնկալութիւն ոչ սակաւ բարեաց որ 'ի նմանէ ըստ ուսումնական մասին իբրեւ արդէն իսկ

կատարեալ և յարդիւնս պտղաբերու-
թեան եկեալ այնպէս ընծայեցուցա-
նեմք մերոցն յօրինակ բարի և շահա-
ւետ :

Եւ ըստ իս նախ քան զամենայն
պարտ է հաստատել ընկերութիւն
ինչ վարձատրական, որ վարձս և պար-
գէս կշռեսցէ յառաջացելոցն յուս-
մունս, յարուեստս, ի կենցաղօգուտ
ճարտարութիւնս, ի գեղարուեստս,
յերկրագործութեան, և այլն : Եւ յս
ընկերութիւն առաջարկեսցէ ազգին
և զյօրինուած պիտանի գրուածոց
ըստ պայմանեալ ժամանակին, և
զարժանաւորս ի նոցանէ պարգեւե-
ցէ : Խոստասցի պարգէս այնոսիկ
որք զեւրոպական արուեստս ի մեր
աշխարհ մոծանեն, և որ ի ճարտա-
րութեան մասին համազօր եւրոպա-
ցւոցն գտցին, փառաւորեսցէ զնոսա
տրովք մրցանակաց, և զանուանս նո-
ցա յօրագիրս իւր հռչակեսցէ :

Վանդի ժողովուրդն մանուկ գո-
լով մտօք, բռնէն է ի նմա քան զփա-
ռացն՝ շահուն տենչ, և քան զգոհա-
թութիւնսն զօրեղ ակնկալութիւն վար-
ձուց, որ խրախուսեն զնա ի փոյթ
զարգացման ուսման և արուեստից :
Հաւաստիք իրացն ճշմարտին յԱւրո-
պա . քանզի այնոքիկ յազգաց՝ որ
գիտեն վարձատրել զյառաջադէմն
յարուեստս և ի գիտութիւն և պար-
գէս և փառս խոստանան, նոցին ժո-
ղովուրդք ուսեալք են և մտավարժք,
և նորանոր կենցաղօգուտ գիտութեց
հետամուտք . և զհակառակն սորին
է տեսանել յազգան՝ յորս սակաւ են
պարգեւք և խոստմունք պարգեաց :
Իողոք բառնան Խտալացիք, Եպա-
նիացիք և այլք, թէ չիցեն վարձա-
տրեալք իբրեւ զանգղիացիս զգաղ-
ղիացիս և զգերմանացիս, զոր և յետ
նութեան իւրեանց համարին պատ-
ճառս : Եւ որ եթէ նոքա զայս բողոք
ունիցին, զի՞նչ ապա մեք : Վաջածա-
նութ է մեծի և փոքու, զի ցարգ և
յազգի մերում կացին արքանուանիք
ի հնարս ճարտարութեան, և չքնաղ

արուեստին և նրբին ձեռակերտօք
իւրեանց զարմանալի գտան և յաչ
եւրոպացւոց անգամ . այլ ո՞ր մէնջ
վարձս շնորհեաց փոխարէն վաստա-
կոց նոցին, կամ պատիւս ըստ արժա-
նեացն խոստացաւ . ո՞ր եցոյց քաղցր
դէմս, և զուարթ հայեցիւք խնդակից
նոցին եղև, ո՞ր յորդոր և քաջալեր, ո՞ր
ձեռնկալու և յուսադիր . գուցէ՞ որ
որ ընդ թեօք իւրովք ժողովեալ իցէ
զնոսա, և յանձանձանօք մխիթարնո-
ցին լեալ . գուցէ՞, որ ջնջեալ իցէ ըզ-
քիրտն ճակատուց նահատակացն, որ
ի սէր ազգին և հայրենեաց մեծա-
մեծ դժկամակութեց հանդիպեալ
իցեն, և պաշտպան նմին կացեալ, և
ի բիւր ճգունս նահատակեալ, և ան-
ոք անօգնական ազգի ազգի վշտաց,
զգուանաց, հալածանաց և մահունց
տարեալ . գուցէ՞, որ զյիշատակս նո-
ցին գէթ զկնի մահուանն արձանա-
ցուցեալ և անմահացուցեալ իցէ :
Իսկ զհակառակս սոցին . . . աւաղ . . .
Օ ի՞նչ ապա . աստի դիմակալու խոք
անտի լքումն անյարիր, և որ այն ի-
ցէ, որ յորդոր լինիցի ազգի մերում
ի փոյթ զարգացման :

Եւ յս ազգ նմանէր երբեմն քաջաձի
կառաց, որ ընդ շաւիղս փառաց սու-
րայր յաջողակի . իսկ զարդիս, աւանդ,
խրեալ կան անիւք կառացն ի ճախին
մօրս, և անտերունչ և անշարժ մնայ
յանցս ճանապարհին : Ի տխուր պատ-
կեր, ո՞ր քստմնելի պատահար . . . ողոր-
մեցարուք ո՞ր բարեկամք, ձեռն տուք
ազգասէրքդ, յառաջ մատիցեն արք
կորովիք, ձգեսցին բազուկք զօրա-
ւորք, վերածել զհարստեալն ի կուռն
պողոտայ : Եւ յս է ժամադրութեանն
վայր, այս է օր բարեպատեհ, ելցեն
ազգասէրքն յասպարէզ փառաց . չէ
այլ ժամ յանձուկս սենեկին լոկ ազ-
գասիրութեանն պարծիլանուամք . որ
ազգասէրն իցէ՝ աշխարհի երեւոցի,
խրախոյս բարձցէ, ձայնատու լիցի ի
մի միաբանութիւն խմբիլ, կապիլ եղ-
բայրաբար և թափել զամենայն ճիգն
ի զարգացումն ուսման արուեստից

Լ քաղաքականութեան : Լ, Երանի Լ՝ Զ.
գին . երանեալ այժմ, Լ երանեսցի
յաւիտեանս :



ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆԴԻՍ

በኤፍ.ዲ.ዲ. ላይ የተዘጋጀው የጥያቄ ደብዳቤ ለሰነድ ማረጋገጫ ማስገባት አልተቻለም፡፡

ՀԱՅՍ ԵՒ ԶԱՆՔ . աս պիտի ըլլայ
հայրենասիրաց դրօշակին վրայի գը-
րուածքը, կ'ըսէ օտարազգի իմաս-
տունին մէկը, և իրաւունք ունի .
վասն զի ո՛ր և իցէ ժամանակ ան մար-
դիկն որ իրենց ազգին ուսումնական
և բարոյական յառաջագիմութեանը
ճշմարիտ փափաք ունեցեր են՝ աս եր-
կու բանովս իրենց փափաքանաց հա-
սեր են : Հաստատուն յոյս ունենա-
լով թէ աշխատանքնին անպտուղ պի-
տի չմնայ, ամէն դժուարութեանց
դէմ զօրացեր են և իրենց աշխատան-
քին պտղաբերութիւնը տեսնելով,
փոխանակ անհոգութեան և թուլու-
թեան մէջ իյնալու՝ ջանքերնին միշտ
աւելցուցեր են : Ի՞նչ քաղցր յոյսը և
աս փափաքելի ջանքը պսակուած տե-
սանք նաև աս տարի Ռաֆայէլեան
վարժարանին աշակերտացը վրայ, որ
սեպտեմբերի առջի օրերը Լյնամակա-
լաց ժողովէն մէկիկ մէկիկ քննուելէն
ետքը, նոյն ամսուն Տի՛ն ըստ իւրաքան-
չիւր արժանաւորութեան իրենց մըր-
ցանակներն ու պարգևները առին :
Լուչպէս որ սովորութիւն է, առաւօ-
տանց ամէն ժողովականք ու հրաւի-
րեալ պատուաւոր անձինք նոյն վար-
ժարանին մատրանը մէջ սուրբ պա-
տարագին առաջիկայ ըլլալով՝ գոհու-
թեան աղօթքներ ու երգեր ընելէն
ետքը, ժողովեցան վարժարանին հան-
դիսարանը . հոն պատմական և բա-
նասիրական ուսմանց դասատուն շատ
հմտական ու եռանդուն ճառ մը խօ-
սեցաւ մեր ազգին մասնաւոր բարոյա-
կան կատարելութեանցը վրայ, ու

զօրաւոր և գեղեցիկ քաջալերութեանիւթ առաւ աս բանս՝ սիրտ տալու ազգասէր լսողաց, և մանաւանդ փութաջան աշակերտներուն, որ ան ազգային կատարելութիւնները իրենց անձանցը վրայ ալ ճշմարտեն։ Նկրնար մէկը այսպիսի ազգային վեմու սրտաշարժ հանդէս մը տեսնել, ու չլուսալ իր սիրելի ազգին բարոյական և ուսումնական երջանկութեանը օրէ օր աւելնալուն։ չկրնար նաև աս հանդէսը տեսնելէն ետքը՝ չորդորուիլ իր ջանքն ալ շատցնելու՝ ազգին պայծառութեանը համար, տեսնելով ան բազմարդիւն դաստիարակաց ու վարժապետաց, և ան ուսումնասէր ընտիր աշակերտաց ջանքը։

Լստենախօսուածնէն ետև կարգա-
ցուեցան իւրաքանչիւր աշակերտաց
բարեկրօն վարուց կողմանէ և ամէն
մէկ ուսմանց մէջ ինչ աստիճանի քաջ
գտնուիլը, և ըստ այնմ արժանաւոր
մրցանակները տրուեցան: Լս տարի
առաջին մրցանակի արժանի եղողնե-
րը՝ իրենց յառաջագիմուծեանը աս-
տիճանին նայելով ասոնք են .

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՃԳԻՃԵԱՆ
ՊՕՂՈՍ ՄԵՐՃԱՆՃԵԱՆ
ԱՂԵՔՍԱՆԴԻ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ
ՍՐԱՊՈՆ ՀԵՔԻՄԵԱՆ
ՅՈՎՀԱՆՆԻՍ ԵՍԱՅԵԱՆ
ԳԱՅԵՏԱՆՈՍ ՄՈՇՈՐՈՅ
ՅՈՎՀԱՆՆԻՍ ԱԳՍԵՆՏԵԱՆ
ՅՈՎՀԱՆՆԻՍ ՀԱՊԿԵԱՆ
ԱՂԵՔՍԱՆԴԻ ԻՕՔՍԻԹԵԱՆ
ՍԱՐԳԻՍ ԱԼԵԱՆԱՔԵԱՆ

Լեկրորդ մրցանակի արժանի սե-
պուածներն ալ ասոնք էին .

Յակոբ Ղամպազեան
Սանուէլ Վէօլէեան
Գայետանոս Լետի
Սիքայէլ Սեղոսեան
Սերովբէ Պօլսեան
Պօղոս Լըրամեան
Պօղոս Շահբասեան
Պետրոս Սօֆեայեան